

- 7) Изъ Книги Царевича Баграта о грузинскихъ переводахъ духовныхъ сочиненій и героической повѣсти „Дареджаніан“ СП. 1899.
2. Պ. Միլայի *Skrskrlmshg* իւր գորտորական շարպրութիւնը. — Die obere trigeminuswurzel. Berlün. 1899.
3. Պ. Կ. Դադուրեամից. — I. Տառապեայների ծառայ Թօմի Ա. Կորած բարեկամը. Վաղարշապատ. 1899.
4. Պ. Կ. Կոստանեամից. իւր հրատարակած՝  
ա) Մկրտի նազա՞ւ իւր տաղերը. Վաղարշապատ. 1899.
- Բ) Գրիգորի Ալդամտցին և իւր տաղերը Թիֆլիս. 1898:

Մասենադարձական պիտին

Գ. Վ. Յովակիմիան.

## ՏԵՇԿԱՀԱՅՔ.

+++

«Պոլսկրմակ հեկեցակամներուն» — Տ. Մուշեղ վարդապետ, Արտիկիրի և Ա. Կոնյայ առաջնորդական տեղապահը, — որ նոյնքան գնահատուած է իր հոգեոր հավուութեան պաշտօնին մէջ որբան իր գրական կարողութեամբը ու հրատարակութիւններովը, — Պոլսերնակ եկեղեցականներուն ուղղած բաց նամակ մը դրկած է մեզ, ինչպէս նաև բոլոր ազգ. թերթերուն, անկեղծ յուղումի շեշտերով ցաւ յայտնելով Վանայ կրօնափոխութեան շարժման հանդեպ հայ. կղերին ցոյց տուած անտարբերութեանը մասին. «Արգեօք չկարդացիք», կը հարցնէ 8. Մուշեղ վարդապետ, Արևիկի 3910 թուով հրատարակուած Վանէն նամակը, ուր շատ որոշ կերպով կը շեշտուէր քանի մը վանական խելքուկ վարդապետներու ձեռք մնացած այդ անհոգին վիճակին բարցական ու տնտեսական խնամքի պարտքը. Խւ եթէ կարդացիք, արգեօք ձեր հոգիները թունտ չելան՝ գործնական ճամբով մը պարտաճառ նաշութեան ու զացումի արդիւնքը ցոյց տալու. Հիմայ ամենքդ, գուք որ մեր եկեղեցւոյ եպիսկոպոսներն էք, Պոլսոյ մէջ մէկ մէկու վրայ զիզուած, անգամ մը կոչում լրէք ձեր մարած խիշճերուն ու անձնենիդ բաղդատեցէք օտար կրօնականներուն հետ. Ինչ մեծ անդունդ, անոնց գործունէութեանը և ձեր թշոյլ ընթացքին միջեւ.

8. Մուշեղ վարդապետ յայտարարելէ ետքը թէ Պոլսոյ բարձրաստիճան հայ եկեղեցականները

բարոյապէս պատասխանառու պիտի մնան՝ դաշտանափոխութեան հետեւակներուն, չերմ հրատէր մը կուղղէ անսնց՝ ժամ առաջ ճամբար, ելլեւ դեպի ի վան:

Ե. յս նամակէն յէյմէկ օրինակ զրկուած է մայրաքաղաքս գտնուող եպիսկոպոսներուն և վարչութեան անդամներուն:

Տ. Մուշեղ վարդապետ, ապացուցանելու համար թէ ինքը որբան անկեղծ է իր հոգեոր մեծ եզրայրներուն, նկատմամբ իր արտայայտած զգացումներուն մէջ, կաւելացնէ որ եթէ Պոլսոյ եպիսկոպոսներէն մէկը յանձն չառնէ Վան երթալ՝ ինքը պատրաստ է երթալու.

— Վանմ. Նուրբեան է փէնտի, նախագահ երկագործական գրամատան վարչական խորհուրդն, նամակ մը ուղղելով ս. Պատրիարքը Հօր, յայտարարած է թէ երկագործական գրամատառն պատրաստ է 2000 սուհիի փոխատուութիւն մը ընել՝ Վանայ կարօտեալներուն յառաջիկայ ցանքին դիւրութիւն մը ընծայելու նպատակով. Ա. Պատրիարքը հայրը այս առաջարկութիւնը յանձնեց քաղաքական ժողովին նկատառմանը.

— Յունաց ս. Պատրիարքը Հօր խնդրանք մեր ս. Պատրիարքը հայրը «Հայ եկեղեցւոյ տօնակարգութեան» վերաբերեալ աշխատափութիւն մը պատրաստած է զոր պիտի յանձնէ Փէնէրե պատրիարքարանին. Լայագէտ Տիմիդրիոս է փ. Զօլաբիտես յունարէնի պիտի թարգմանէ այդ ձեռագիրը:

— Իզմիրի առաջնորդ Տ. Մելքիսեդէկ սրբազն 23 մարտ, մեկնեցու մայրաքաղաքէս՝ համականքի ջերմագին արտայայտութիւններու մէջտեղ, Խրէկ առաւուս կանուխէն, Գատըզիւղի ազգայինները թաղ. խորհրդարան կը գիմէին հրաժեշտի ողջոյնին մատուցանելու իրենց սիրեցեալ քարոզչին, Պոլսոյ զանազան թաղերէն ալ բազմաթիւ ազգայիններ փութացած էին հոն:

Ա. Պատրիարքը հայրը իր կողմէ յատկապէս զրկած էր Տ. Գնէլ վարդապետը՝ ողջերթ մազմելու:

Իզմիրի ս. առաջնորդին ողջերթ մազմելու համար Պալամէիոյ քարափին վրայ կը գտնուէին Քերայի քարոզչի Տ. Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսսան, Խրուսաղէմի Պատր. փոխանորդ Տ. Գէորգ եպիսկոպոս Խրիցեան, Տ. Արքահամ եպիսկոպոս Մամիկոնեան:

Ժամը 10-ին, հրաժեշտի վերջին ողջոյնները փոխանակուելով բոլոր եկեղեցականներն ու աշխարհականները մեկնեցան շոգենաւէն որ քիչ ետքը ճամբար, ելաւ դէպի Իզմիրի.

— Խառն Ժողովը գումարուեցաւ 2 ապրիլ Պալամէիոյ Խորհրդարանը, նախագահութեամբ Ա. Պատրիարքը Հօր և ատենապետութեամբ Տեառն Բարձր. Յարութիւն փաշայի,

Ժողովը շարունակեց իր խորհրդակցութիւն-

ները եկեղեցական խնդրոց վրայ և որոշեց թ. Դրան թագրիր մատուցանել՝ անոնց կարգադրութեանը համար:

— Ժողովը յայտարարեց թէ յրացած է արդէն իր պաշտօնավարութեան օրինական շրջանը, և խնդրեց Ս. Նախագահէն ի դորձ զնել ըստ օրինի պէտք եղած միջոցները՝ նորոգ ընտրութիւն կատարելու համար:

Ժողովը նկատելով որ ստեղ խնդիրներ կը մատուցուին օտար երկիրներու մէջ մեռնող ազգայիններու կոտակաց և ժառանգութեանց մասին, յանձնաժողով մը կազմեց և պաշտօն յանձնեց անոր՝ ուսումնասիրել և ստուգել այդ կոտակներու խնդիրները և ներկայացնել հարկ եղած կարելոր առաջարկութիւնները:

Այս Յանձնաժողովին անդամ՝ կարգուեցան Տ. Գրիգորիս Յովհաննէսիան: Տ. Վաչըրամ Մանկունի Սրբազնները և Զայշեան Ելիսո Էֆ.:

Արարէիրի գաւառային ժողովին ինդրանաց վրայ, ժողովը որոշեց հրահանգ ուղղել առաջնորդական նոր ընտրութիւն կատարելու համար և սահմանեց ընտրելեաց ցանկը:

Կայսեր ժողովը տեղեկանալով որ Տ. Մուշեղ Պ. Ա. Արարէիրի վիճակային գործերով ծանրաբանեալ կը գտնուի, որոշեց որ ըստ առաջնոյն Անայ վիճակը ունենաց իր առանձին հոգեոր հովիւր, ուստի Քղիր առաջնորդական տեղապահ Տ. Արիստակէս Ա. Խաչատրու բեանը միեւնոյն պաշտօնով որոշեց ուղարկել Ակն:

Ժողովը Քղիր առաջնորդական տեղապահ կարգեց Արմաշու Գրիգորակիր միարաններէն Ըսլամիան Տ. Վաչըրի Վահագահի մատուցութեան նոր ընդունուելու համար:

Ժողովը Ամասիոյ առաջնորդական նորընտիր տեղապահ Վանքեան Տ. Արիստակէս Պ. Վարդապետին հրաժարականը Նկատողութեան առնելով, անընդունելի գատեց՝ կարեոր համարելով անոր ներկայութիւնը վիճակային գործերու կարգադրութեանը համար:

— Կը լսնէք թէ մօտէրս Թիֆլիզի մէջ պիտի պապրուի կրօնական կարեոր ձեռագիր մը Դիրք թրոց՝ որ կը պարունակէ Քաղեքանի ժողովէն ետքը մեր եկեղեցական հայերուն ու Հայրապետներուն զրաւորապէս յայտնած կարծիքները ի մասին մեր ս. Հարց գաւանութեան Այս ձեռագիրը որ ընդօրինակուած է Ժողովան անուն քահանայի մը կողմէ Ժ. գարուն մէջ, ի յայտ կը բերէ կարդ մը նոր վաւերագիրներ՝ վերցիշեալ խնդրի մասին:<sup>2</sup>

— Աղջ. Պատրիարքարանէն հրահանգ տրուեցաւ Կեսարիոյ, Առուսությունի, Պրուսայի և Պիլէճի-

կի առաջնորդներուն որպէս զի իրենց պատրաստութիւնները տեսնեն՝ Զատկէն անմիջապէս ետքը էջմիածին ուղեորելու համար ուր եպիսկոպոսական ձեռնազրութիւն պիտի ստանան:

— Արդինապէս եղած պատրիարքական տեսքնութեան մը համաձայն, Տ. Ներսէս Եպիսկոպոս ապրիլ 10 շաբաթ օրը կը մեկնէ մայրաքաղաքէս Մեսածքի շոգենաւով գէպ ի Տրապիկոն, անէկ Վ.ան ուղեորելու համար, Երեն կը նկատիրանայ Քղիր նորընտիր առաջնորդական տեղապահ Ըսլամեան Տ. Վահագահ վարդապետ որ Ասլանեան որրազանին հետ Վ.ան պիտի երթայ և պիտի աջակցի անոր մինչև որ իր նոր պաշտօնին վերաբերող հրովարտակը ստանայ, որմէ անմիջապէս ետքը Վ.անէն պիտի երթայ Քղիր:

Խառն ժողովը գումարուեցաւ 10 մարտ Վահագահից խորհրդարանը և ախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Ասլանեան Ստեփան փառաջայիր:

Ժողովը Նրգնկայի գաւառային վարչութեան խնդրանաց համաձայն, առաջնորդի ընտրութեան հրահանգ ուղղել որոշեց ընտրելի ներկայացնելով, տեղուցն առաջ տեղապահ Տ. Վանիէլ վարդապետ և Յակոբեան Տ. Վահագահ ու Գրիգորի Տ. Վահագահ վարդապետները:

Ժողովը պաշտօնէ զագարեալ համարեց Էնկիւրիի առաջն տեղապահ Տ. Տաճառ Ա. Ռականեանը, գործուած վարչական անկանոնութեանց պատճառաւ, և նոյն վիճակին առաջն տեղապահ կարգեց Երուսաղէմի միարան Տ. Եղինիկ Ա. Պապայի առաջն Ենոքիրնը և Խորհրդանը Ս. Նախագահէն փոթացնելու մագրիրը, անոր պաշտօնը հաստատող կառագարական հրամանագիրը ստանալու համար:

Ժողովը՝ Արօնական ժողովին առաջնորդութիւննեան համաձայն՝ Ամասիոյ վիճակին առաջն տեղապահ կարգեց Կարգադրելու համար: Տ. Վահագահ Վահագահի մատուցութեան առաջնորդութիւնները:

Ժողովը պաշտօն տուաւ Վահագահոյ քարոզիչ Տ. Բարիթուղիմէս Ա. Պաղճեանի Ֆիլիպէ երթալ, տեղուցն ազգ գործերը քննելու և անհամաձայնութիւնները կարգադրելու համար:

Ժողովը ասնեցմէ զատ կարդ մը յարաբերական խնդրներու մասին ալ տնօրինութիւնները ըրաւ:

— Խառն ժողովը նկատողութեան առաւ Նիկոմիդիոյ թեմերէն Էջմէ զիւղին մէջ պատահած դաւանափախական գէպքերու խնդիրը և յետ խորհրդակցութեան որոշեց յանձնարարել վիճակին առաջնորդ Տ. Ստեփան եպիսկոպոսի՝ փութով Էջմէ երթալ և կրօնափոխութեան շարժառիթը բառաւալու համար անմիջական միջոցներ գործազրել:


— Պ. Յանչեան 5000 բուպլիի նոր գումար մը դրէած է ս. Պատրիարք Հօր, նոր որբանոցի մը հաստատման համար որուն չորս տարուան ծախքը

\* Խօսքը Անօնիան միարանութեան կ. Պոլսոյ վանի մատենադարանում գտնուած ձևագրի մասին է.

ապահոված կըլլայ Ռուսահայ հրապարակագիրէ՝ իր հանգանակած այս գումարով։

— Կրօնական ժողովը գումարուեցաւ 23 մարտի ազգ՝ Պատրիարքարանի մէջ, ժողովը Պօթուշանի անուղղայ Տ. Աթանաս քահանան կարգադրութեաւ և հարկ տեսաւ իր այս օրոշումը հաղորդել Ռումանական կառավարութեան, Այս առթիւ օրոշեց ամենայն Հայոց Ս. Հայրապետին ուշադրութեան յանձնելոր եթէ կարելի է՝ Ռումանիոյ հոգեոր Հայոց տեսչութիւնը՝ Պատրիարքարանի յանձնուի։

— Պօյապատի և շրջակայքի հայ բօշները չուզենալով իրենք ալ անմասն մնալ գաւառային կարութեալներու նպաստամատոյց գործէն, այդ նպատակով 9 ոսկիի գումար մը զբկած են ս. Պատրիարքին։



## ՄԱՆԿԱՎԱՐԺԵԿԱՆ ԲԱԺԻՆ.

ՀԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՈՒՍՈՒՄԸ

(Alf. Hillebrandt).

ԵԿԵՂԵՑԻՆ ամէն տեղ ուսման մատակարարող է եղել Խնչպէս որ քրիստոնէական աշխարհում վանական զպրոցները կրթութեան վայրեր են հանդիսացել այնպէս էլ հին Հեղկաստանի արքական մանուկներն իրանց նախնական ուսումը ստացել են բրահման - վարժապետներից։ Հետաքրթական է տեսնել, թէ ինչպէս բրահմանական քաղաքակրթութիւնը ծաղկել է ինքնուրոյն կիրապով, արեմուտքից անկախ։ Այս տեղ զարմանալի նմանութիւններ ես կը գտնենք թէպէտ արքելքն ու արքեմուտքը ուրոյն ուրոյն ճանապարհներով են ընթացել։ Մեզ հասել են բազմաթիւ զրուածքներ, որոնք տեղեկութիւններ են հազորդում բրահմանութեան կրօնական կենաց մասին։ անոնք ծանուցանում են և այն, թէ այն տեղ արքականի առաջին կրթութիւնը ինչպէս է ձեւացել։ Զոր օր մենք գիտենք, թէ ինչ կարգերով մանուկն

ընդունվում էր հոգեոր հովանու նելքոյ, կամ թէ ինչպէս էր ընթանում ուսուցումը. այս բոլորը աւանդած է „առանին իրատների“ (զբիւաշութը-ներ) կոչուած մատեանների մէջ, որոնց համապատասխան զլուխները պետք է թերեւ մարդկութեան հնագոյն մանկավարժական յիշատակարան (monumenta paedagogica) համարուին։

Թէ ինչ հասակի պիտի լինէր աշակերտը, այդ կախուած էր իւր ծագումից։ Բրահմանի որդին 8 տարեկան հասակում՝ ասպետի կամ նաև քաղաքացու որդին 11 և 12 տարեկան հասակում կարող էր ուսումն սկըսել, սակայն այդ ժամանակը կարելի էր յետաձել մինչև 16, 22 կամ նաև 24 տարին, բայց ոչ աւելի, ապա թէ ոչ պատանին ուսում առնելու արտօնութիւնը կորցնում էր և ընտիր հասարակութեան շրջանից դուրս էր մերժվում։ Խուզած և պճազարդ ներկայանում է նա իւր վարժապետին մի այնպիսի բարեգուշակ օր, որ լուսնի և աստեղատունների յաջող զիրքից էր կախուած։ Նորանից ստանում է իւր ուսանողական հանգերձը՝ պատմուձան և մորթի, գօափի, գաւազանի ներից զանազանվում էր իւր հանդերձանքի մոր և է արտաքին նշանով, այնպէս էլ հընդիկի կաստայական խարութիւնը յայտնվում էր հազուատի տարբերութեամբ։ Բրահմանի որդին ստանում է սև յամոյրի մորթի, աղնըւականի որդին՝ եղնիկի մորթի, իւկ վայիսիայի կոչման նշանը համարվում է կովի կամ այծի կաշին։ Խրաքանցիւրի գոտին տարբեր նիւթից է, նմանապէս գաւազանի փայտն ու երկարութիւնը միատեսակ չէ։

Ընդունելութիւնը խիստ հանդիսով է կատարվում։ Ծալճաատող կրակի առաջ կանգնած վարժապետն ու աշակերտը այս տրամախօսութեամբ են սկսում այդ կարգը։ „Եկել եմ ուսում առնելու, ընդունիր ինձ։ Սաւիտր աստծուց ներշնչուած կամիմ աշակերտ դառնալ“։ Ի՞նչ է անունդ։ „Ա. Ա.՝ Երանի թէ, ով Սաւիտր աստուած, ներկայ Ա. Ա.՝ ի բաղձանքին կատարեալ լումն տայի։ Տրամախօսութեան այս հաստատուն բանաձելը տա-